ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

հուլիսի 2020 թվականի № Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի №90Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով «ԳԳՎ» սահմանափակ պատասխատավությամբ ընկերության 2020 թվականի հունիսի 10-ի №11/2020, հունիսի 12-ի №13/2020, հունիսի 23-ի №14/2020 և հունիսի 24-ի №14/2020 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 6-ի «ԳԳՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Վարդան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №90Ա որոշմամբ «ԳԳՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Վարդան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0170 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել տասնհինգ տարով՝ որոշման՝

1) 1-ին կետում «15 տարի» բառերը փոխարինել «մինչև 2030 թվականի հուլիսի 6-ը» բառերով, իսկ «Շենիկ գյուղի վարչական տարածքում՝ Թալինի ոռոգման ջրանցքի երկրորդ հերթի արագահոսի հատվածում,» բառերը փոխարինել «Շենիկ համայնքի վարչական տարածքում՝ Թալինի երկրորդ հերթի ոռոգման ջրանցքի արագահոսի հատվածում» բառերով,

2) 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «2020» թիվը փոխարինել «2035» թվով, իսկ 5-րդ կետում «Թալինի ոռոգման ջրանցքի երկրորդ հերթի արագահոսի հատվածում» բառերը փոխարինել «Թալինի երկրորդ հերթի ոռոգման ջրանցքի արագահոսի հատվածում» բառերով:

2. «ԳԳՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) «Վարդան» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված տասնհինգ տարվա ժամկետը ընկերության համար ավարտվում է 2020 թվականի հուլիսի 6-ին,

2) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 6-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2020թ.